

## ԴԱՎԻԹ ԳՅՈՒՐՉԻՆՅԱՆ

Բանասիրական գիտությունների թեկնածու

## ՀԱՅԵՐԵՆԻ ԲԱՌԱԿԱԶՄՈՐԵՆ «ԱՄՈՒԼ» ԿՐՈՆԱԿԱՆ ԲԱՌԵՐԸ

Հայերենի բառապաշարի մեջ յուրահատուկ մի համակարգ են ստեղծում կրոնական բովանդակություն ունեցող բառերը, որոնք հատկանշվում են իմաստային-հասկացական և գործառության առանձնահատկություններով: Կրոնական բառերը տարբերակվում են ըստ ծագման, կազմության, իմաստի, ձևաբանական արժեքի, գործածության ոլորտի և այլն: Հետազոտողներին առավելապես հետաքրքրել է սրանց ստուգաբանությունը<sup>1</sup>, մասամբ՝ իմաստաբանությունը<sup>2</sup>. այս բառերը նաև առանձին բառարանի նյութ են դարձել<sup>3</sup>: Կարևոր է նաև կրոնական բառերի բառակազմական արժեքի քննությունը<sup>4</sup>:

Հայերենագետներն իրենց ուսումնասիրություններում ցարդ ուշադրություն են դարձրել բառակազմական տեսանկյունից արդյունավետ բառային միավորների (արմատների) և կենսունակ ածանցների վրա, մինչդեռ լեզվի բառակազմական համակարգի ամբողջական պատկերը ստանալու համար անհրժեշտ է հետազոտել ոչ միայն բառակազմորեն արգասավոր արմատներն ու բառերը, այլև նրանք, որ արդյունավետ չեն կամ պարզապես «ամուլ» են: Այսինքն՝ տվյալ միավորներով այլ բառեր չեն բաղադրվում, նրանք բառակազմական որևէ փնջի մեջ չեն մտնում. միայնակ են: Այդպիսի բառերի համար նպատակահարմար է գործածել բառակազմորեն մեկուսի (կամ մեկուսացած) տերմինը: Երևույթն առավել ցայտուն կերպով մեկնաբանվում է «ամուլ» բառը անվանման միջոցով:

Գիտական հետաքրքրություն է ներկայացնում այն հարցը, թե բառակազմորեն մեկուսի բառերը լեզվի պարզացման ո՞ր փուլին են առնչվում և ժամանակային ինչպիսի՞ ընդգրկում ունեն, բառիմաստային ո՞ր խմբին են պատկանում, ինչպիսի՞ն է նրանց նկարագիրն ըստ խոսքիմաստային պատկանելության, կա՞ն արդյոք գործոններ,

<sup>1</sup> Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. 1-4, Երևան, 1971-1979: Ա. Մեյնե, Հայագիտական ուսումնասիրություններ, Երևան, 1978: Գ. Բ. Չախուկյան, Հայոց լեզվի պատմություն: Նախագրային ժամանակաշրջան, Երևան, 1987:

<sup>2</sup> Դ. Գյուրջինյան, Եկեղեցական հոգևոր-կյանքին առնչվող կացարանների անվանումները, «Էջմիածին» հանդես, 1992, Ը:

<sup>3</sup> Մաղաքիա արք. Օրմանյան, Միական բառարան, Երևան, 1992:

<sup>4</sup> Դ. Գյուրջինյան, Քրիստոս անվան բառակազմական արժեքը հայերենում, «Էջմիածին» հանդես, 1992, ԺԲ:

որոնք խոչընդոտել են բառի բաղադրելիությանը և այլն: Բառակազմորեն մեկուսացած բառերի ցանկերի ստեղծումը կնպաստի հայերենի բառակազմական օրինաչափությունների մասին համապարփակ պատկերացում կազմելուն, շնորհիվ որի հնարավոր կլինի որոշակի ճշգրտումներ մտցնելու բառապաշարի ներքին դասակարգման մեջ:

Ներկա ուսումնասիրության նյութն ընդգրկում է հայերեն մատենագրության մեջ, բառարանագրական և այլ աղբյուրներում վկայված կրոնական բովանդակության «ամուլ» բառերը<sup>5</sup>, որոնք բաշխվում են նախագրային շրջանից մինչև աշխարհաբար ընկած ընդարձակ ժամանակի մեջ:

Ըստ այս կամ այն կրոնին առնչվելու հատկանիշի կամ ըստ կիրառության ասպարեզի՝ հայերենի «ամուլ» բառերը կարելի է տարբերակել հետևյալ ձևով՝ նախաքրիստոնեական (որոշ յափով պայմանական անվանում է, քանի որ մատնանշվում է ժամանակագրական կողմը), քրիստոնեական, մահմեդական և բուդդայական: Տվյալ դեպքում շրջանցում ենք այն հանգամանքը, թե այդ բառերը տեսակարար ի՞նչ կշիռ ունեն հայերենի բառապաշարի մեջ, որքանով են յուրացված նրա կողմից. կարևորը հայերենում նրանց փաստացի արձանագրումն է:

Նախաքրիստոնեական շերտի մեջ մտնող միավորներն իրենց հերթին բաժանվում են երկու խմբի: Դրանցից մի մասը վերաբերում է հին հայոց հեթանոսական կրոնին, իսկ մյուսը՝ զրադաշտականությանը: Վերջիններս փաստորեն իրանական իրականությունն արտացոլող բառեր են և առանց քացառության՝ իրանյան փոխառություններ, ինչպես՝ բարսմոթք «կապուկ, որ կրակապաշտները բռնում են կրակ վրա», քոզպայիտ «պարսից կրոնական գրքի անուն», քատուկ «վիռլի կահարդ», ռատ «իմաստուն», պետոզ և պարտքաշ / / ամպարտքաշ «պարսկական աղանդների և գրքերի անուններ», կեշտ «կրոն, հավատ» և այլն:

Նման կարգի բառերից մի քանիսը բառակազմական արժեքից գրեթե չուրկ են, սակայն միայնակ չեն. հմմտ. մազդեզմ «Որմիզդի պաշտոնյա. մոզ» և մազդեզակամ «մազդեզներին բնորոշ. պարսկական», քէշ «(զրադաշտական) կրոն» և քէշակարկատ «աղանդ, կցմոդ, հնարող (կարկատող)», յաշտ «չոհ. ուխտ» և յաշտածիմ «չոհ անելուց ծնված»:

Չրադաշտականության տարբեր հասկացություններ արտահայտող «ամուլ» բառերը հատկանշվում են մի շարք առանձնահատկություններով՝ խիստ ցածր հաճախականությամբ (ընդ որում եզակի կիրառություններն էլ նեղ իրադրական բնույթ ունեն), հայերենին պնդաբար հնչյունական ձևավորմամբ, իմաստի գրեթե անըմբռնելիությամբ և չպատճառաբանվածությամբ, որոնք էլ նպաստում են

<sup>5</sup> Գ. Ալեքսիքեան, Խ. Միրմելեյան, Մ. Ալզերեան, Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ. 1-2, Վենետիկ, 1836-37: Հր. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, մաս 1-2, Երևան, 1940-1951: Ռ. Ս Ղազարյան, Հ. Մ. Ալեքսիայան, Միջին հայերենի բառարան հ. 1-2, Երևան, 1987-1992: Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության, հ. Ա («Բառագիտություն»-Մ. Հ. Մուրադյան», Երևան, 1972:

հայերենով հաղորդակցվող հանրության կողմից այդ միավորները շյուրացնելուն: Նշված առանձնահատկությունները վերածվում են բառի բաղադրելիությանը խոչընդոտող գործոնների: Հարկ է նշել, որ այս կամ այն բառը միայնակ է մնում միայն թվարկված բոլոր (կամ մի քանի) գործոնների առկայության պարագայում, երբ դրանց ավելանում է ամենակարևորը՝ բառ կերտելու հասարակական պահանջ-մունքի բացակայությունը: Այսպես, օրինակ, ատրուշան «կրակապաշտների մեկան. կրակատուն» բառը, որ վկայված է Ե դարում, գործածական է նաև նոր և ժամանակակից գեղարվեստական գրականության մեջ, իմաստային տեսանկյունից քիչ թե շատ ընկալելի է, ձայնավորների և բաղաձայնների հարաբերակցությամբ՝ որոշակիորեն բարեհունչ, հայերենի վանկակազմիչ կաղապարներին հարապատ, հայերենում բառակազմորեն մեկուսացված է (եթե բացառենք ատրուշանաման դիպվածային կազմությունը): Որովհետև չի եղել նոր բառ ստեղծելու անհրաժեշտությունը: Հարկավոր է նաև ավելացնել, որ ծագումնաբանորեն միննույն ատր- («հուր, կրակ») բաղադրիչն ունեն նաև գրաբարում վկայված ատրագոյն, ատրաշէկ, ատրորակ բառերը, այնուամենայնիվ ատրուշան-ը իրանյան բառակազմական իրողություն է<sup>6</sup> և հիշյալ բառերի հետ բառակազմական փունջ չի կազմում:

Վերաքրքրական մի իրողության մասին ևս: Հին հայերենում ունենք դեմ «կրոն, հավատ» և դեմիմագդեզ/դեմիմազդէն «պարսից հին կրոնը», դեմպետ «կրոնապետ» նույնարմատ բառերը՝ բոլորն էլ փոխառյալ: Գեմ-ը բառակազմական հիմք է դարձել դեմադարձ և դեմակորոյս «ուրացող, հավատափոխ» հոմանիշ բառերի համար, իսկ վերջին երկուսը բառակազմորեն մեկուսացած են, թեկուզև արմատները որոշակիորեն գիտակցվում են (հմմտ. դեմպետ):

Հայերի նախաքրիստոնեական հավատալիքներին առնչվող բառերի մեջ մեկուսացած են մեկ-երկուսը, ինչպես՝ յուշկապարիկ «այս. ոգի. առասպելական կենդանի», ճամբարու «պարիկ», որոնք ևս իրանյան փոխառություններ են (այդպիսին է նաև պարիկ բառը):

Հայ հեթանոսական կրոնին վերաբերող բառերը բառակազմական տեսանկյունից առհասարակ արդյունավետ են: Օրինակ՝ մեհեան «հեթանոսական տաճար» բառից գրաբարում բաղադրվել են մեհեանագիրք, մեհեանակալ, մեհեանական, մեհեանտեղի, մեհեանաշէն և մի շարք այլ բառեր, բազմ «սրահասեղան, կոտտուն» բառից՝ բազմայարկ, բազմածու և այլն: Արգասավոր են իրանյան ծագման նաև այն բառերը, որոնք անցան քրիստոնեական բառապաշարին, ինչպես՝ մարգարէ, հրաշ(ք), զոհ, հրեշտակ և այլն: Մեկ բացառությամբ թերևս՝ նախկառից «(եկեղեցու) հանդիսավոր բացում, տարեդարձ»: Ավելորդ չենք համարում նշել, որ մի կողմից հայերին օտար սրահասեղանությանը, մյուս կողմից՝ հայ հեթանոսական կրոնին և քրիստոնեությանը վերաբերող իրանյան փոխառությունների բառակազմական արժեքի համեմատությունից կարելի է եզրակացնել, որ մեկուսացած մնալու մեջ թերևս դեր են խաղացել հոգեբանական որոշ ազդակներ:

<sup>6</sup> Լ. Ե. Հովհաննիսյան, Հայերենի իրանական փոխառությունները, Երևան, 1990, էջ 140:

Թե՛ նախաքրիստոնեական, թե՛ քրիստոնեական և մյուս շերտերի բառակազմորեն մեկուսի բառերը փոխառություններ (և օտարաբանություններ) են, այնինչ հնդեվրոպական ժազուս ունեցող բնիկ հայերեն կրոնական բառերից և ոչ մեկը «ամուլ» չէ: Թեկուպն դրանք բավական սակավաթիվ են՝ (Տոգի, սուրբ, երեց և այլն):

Քրիստոնեությանն առնչվող բնառաշերտն ամենաընգրկունն է, որն ինքնին հասկանալի է: Այստեղ առանձնանում են նախ երկու խումբ փոխառություններ՝ սեմական լեզուներից (ասորերեն և եբրայերեն) և հունարենից: Պարզ է, որ հենց այն լեզուների փաստերի առկայությունը պայմանավորված է մի կողմից Սուրբ Գրքի և կրոնական գրականության թարգմանություններով, իսկ մյուս կողմից էլ՝ կենդանի շփումներով (քարոզչություն և համակեցություն):

Գործուն և բառակազմական տեսանկյունից արդյունավետ բառերի կողքին՝ քաճանայ, արեդայ, սրովբե, սատանայ (ինչպես և քուրմ, ճեթանոս) և այլն, կան այնպիսիք, որոնցից հայերենում ածանցմամբ կամ բարդումով նոր բառեր չեն ստեղծվել: Դրանցից են՝ ասորական փոխառություններ՝ ատեսարոն «չորս Ավետարան», պրակսաաթայք «Գործք Առաքելոց», քուսիթ «կրոնավորի գլխարկ, կնգուղ», մծղանայ «աղանդի անուն», խարամանի «չար հրեշտակ, դև, սատանա», իբրամեն «Մնացորդաց գիրք», սիդա «բուրվառ», բուտ//էրուտ «կրոնական տեսուչ», եբրայական փոխառություններ՝ ամոն «վարդապետ», բամա «բարձր պոհասեղան, բեմ», բեդգեբուղ «սատանայապետ», ամեն «ճշմարիտ, արդարև, իրավամբ», որ վերածվել է ժայնարկության աղոթքների վերջում՝ իբրև հաստատում ասվածին՝ «ճշմարիտ է, այդպես է» (ինչպես որ եբրայերենում է), բելիար «սատանա», հունարենից՝ պենտեկոստե «հոգեգալուստ, հիսնօրյակ», աղարողոնոս «վարդապետների թիկնոց. փիլոն»:

Բառաստեղծման անհրաժեշտությունից ելնելով՝ հայերենի բառակազմական ճկուն հնարավորությունների հիման վրա նմանատիպ բառերից մեկ-երկու բաղադրություն է կերտվել՝ դրանք դուրս բերելով բառակազմական մեկուսացումից: Հմնտ. ալէլու//ալէլուիա/յ/ «աստվածային, փառաբանական օրհներգություն» և ալէլուել «օրհնաբանել», ովսաննայ «օրհնություն» և ովսաննայաբեր «օրհնաբեր», սադայէլ «սատանա, սատանայապետ» և սադայելական «սատանայական», որը համեմատաբար նոր բառ է: Վերջին բառը հուշում է, որ բառակազմորեն մեկուսի բառերի մեջ հնարավոր են տեղաշարժեր, այսինքն՝ լեզվի վարգացման որևէ փուլում մեկուսի համարվող բառը այս կամ այն ժամանակ կարող է ածանցյալներ (լայն իմաստով) ունենալ: Չենք կարող անտեսել այն հանգամանքը, որ այսօր «ամուլ» ընկալվող որոշ բառերով բաղադրություններ կարող են «թաքնված լինել» ձեռագիր մատյաններում, հիշատակարաններում և այլ սկզբնաղբյուրներում:

Միայն մեկ ածանցյալ ունեցող բառերը կարելի է անվանել բառակազմորեն մենարժեք: Սրանք փաստորեն միջակա մի դիրք են գրավում բառակազմորեն մեկուսացած և արդյունավետ բառերի միջև՝ որպես բառակազմական ներունակության իրացման առաջին աստիճան:

Բառը մեկուսացած ենք համարում՝ որպես կանոն ելնելով գրական-գրավոր լեզվի իրողություններից: Պատկերը կարող է փոխվել, եթե

հաշվի առնենք նաև բարբառային բառապաշարը: Բառն այս դեպքում միայն պիտի համարենք լիովին մեկուսացած:

Բարբառային նյութը բառային-բառակազմական հետաքրքրական առնչություններ է բացահայտում: Այսպես, օրինակ, դերի «վանք» աստրական փոխառությունը պահպանվել է միայն բարբառներում՝ «գյուղական տոնակատարություն դեպի վանքերն ուխտագնացության կամ տոնական օրերի ժամանակ», այսպիսի «մի տեսակ պար», և քաղաքացի է միայն հատուկ անուններում՝ դերեն «վանքի որդի» կամ ռեթանի «ուխտավոր Կավակ»<sup>7</sup>: Նույն ձևով՝ շուշփայ «սուրբ մասունքների ծածկոց, սկիհը սրբելու շոր» բառը (կրկին ասորերենից) գրական հայերենում բաղադրված ենք տեսնում միայն շուշփայակահ-ի մեջ, որ վկայված է մեկ կիրառությամբ<sup>8</sup>, սակայն ունենք նաև բարբառային օրինակափական կազմություններ՝ շուշփացու «ընտիր կտոր, որից շուշփա են պատրաստում», շուշփայել «մասունքը, հաչը կամ Ավետարանը մետաքսահյուս ընտիր շորի մեջ փաթաթել»:

Երբայական փոխառությունների մեջ առանձին խումբ են կազմում Աստուած բառի հոմանիշները՝ Էլ//Էլոհիմ, Ելովա, սաբաուվթ, յահ /<Եհովա/, սադա «ամենակարող Աստված», ահիաթ «Եհովա, Աստված»՝ բոլորն էլ բառակազմորեն մեկուսացած: Հնչյունական անսովոր ձևավորումից բացի մեկուսի մնալու կարևոր պատճառ է հայերեն Աստուած բառի առկայությունը:

Բառի մեկուսի մնալուն նպաստող գործոններից մեկն էլ այն է, որ տվյալ փոխառությունը փոխատու լեզվում ունեցել է բառակապակցության կամ նախադասության արժեք: Այսպես, մարաճաթայ «նզովք» բառը հունարեն նույնահունչ նախադասության տառադարձությունն է (սա էլ իր հերթին՝ արամեերենի) և նշանակում է «մեր տերը եկավ»<sup>9</sup>: Հմմտ. ալեղուիայ՝ եբր. «գովեցե՛ք, փառաբանեցե՛ք Աստծուն», ադոնա՝ եբր. «Տէ՛ր իմ»: Վերջինս գործածվում է սովորաբար Տէր բառի հարադրությամբ. գործառնության նման սահմանափակվածությունն էլ խոչընդոտում է բառի քաղաքացիությանը: Հարկ է նշել, որ ադոնա «Տէր, Տէ՛ր իմ» միավորը միայն որոշակի վերապահությամբ պիտի բառ համարենք:

Քրիստոնեությանն առնվող հին բառաշերտից տարբերվում են հիմնականում միջին հայերենին առնվող բառային իրողությունները: Ոչ միայն ժամանակագրական առումով (վկայվել են առավելապես ԺԳ դարից սկսած), այլև գործածության տարածքային սահմանափակվածությամբ (հանդիպում են հիմնականում Կիլիկյան Հայաստանում ստեղծված դիվանական թղթերում կամ պատմագրական երկերում): Եվ, վերջապես, մեկ-երկու բացառությամբ, արտահայտում են հիմնականում հունարավան և կաթոլիկ Եկեղեցիների բնորոշ հասկացություններ: Հետևաբար, պատահական չէ, որ դրանք փոխառություններ են հունարենից՝ դիակոն «սարկավագ», եմփորոն «եպիսկոպոսական խաչապարդ ուրար», էմերոյիս «եպիսկոպոս»,

<sup>7</sup> Հր. Աճառյան, Հայերենի արմատական բառարան, հ. Ա, էջ 655-656:

<sup>8</sup> Նշվ. աշխ., հ. Գ, էջ 537:

<sup>9</sup> Գ. Բ. Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 466:

եպիմանքի կու « պատարագչի բազմանք», ի կոն « սրբապատկեր», մոնոգոն « մենակյաց», մեսեդի « երեկոյան ժամերգութեան ժամանակ միջանկյալ կամ կցուրդ սաղմոսերգութիւն» (սրանք, օրինակ, ավելի վաղ են վկայվել), լատիններենից կամ իտալերենից՝ բոլ « պապական կոնդակ», դադմատ « կաթոլիկ», վիճի « գիշերային աղոթք», լիկաթ « պապական նվիրակ», քլայուստր « վանք», էնչեմիայ « սրբազորություն, եկեղեցու օրհներգութիւն», ֆրանսերենից՝ արծուէք « արքեպիսկոպոս», բրաշուր « ունիթոր քարուպիչ», ջարբոն « վեղար», դրավերս « խաչի թները», դամիլ « տաճար» և այլն:

Կան նաև ավելի ուշ շրջանի փոխառություններ, որոնք ևս բառակազմութեան մեկուսի են, ինչպես՝ լատիններենից՝ գորփուրայ « մարմնակալ՝ Բրիտանոսի մարմինն իր վրա ընդունող, բոնող ձերմակ կտոր կաթոլիկ եկեղեցում», մեսա « կաթոլիկ եկեղեցու պատարագ» և այլն:

Բառ ստեղծելու հասարակական պահանջումների բացակայությունը, հայերեն համարժեքների առկայությունը և արդեն թվարկված այլ գործոններ նպաստել են հիշյալ բառերի մեկուսի մնալուն: Ի դեպ, սրանցից ընդամենը մի քանիսն են փոխանցվել նոր հայերենին:

Հայերի բազմադարյա շփումները մահմեդականների հետ, նրանց համակեցությունը պատճառ են դարձել, որ միջնադարից սկսած հայերենում գործածվել են բազմաթիվ բառեր, որոնք արտահայտում են մահմեդականությանն առնչվող հասկացություններ: Դրանց զգալի մասը բառակազմութեան մեկուսացած է:

Ժամանակագրական առումով այդ բառերը բաժանվում են երկու խմբի՝ միջինհայերենյան և աշխարհաբարյան: Առաջինի մեջ մտնող բառերը փոխառություններ են հիմնականում արաբերենից, մասամբ նաև պարսկերենից (կամ նրա միջնորդավորումով), ինչպես՝ մձիրայ//միճարայ « մինարեթ», գեիա « մահմեդական կրոնավորների վանք», իպլիս « սատանա», կուրան//դուրան « մահմեդականների սուրբ գիրքը», ճեմիայ//ճամի « մկկիթ», մամբար « մկկիթի բեմը կամ խորանը», մէգար « սրբի գերեզման», սոլլայ « մահմեդականների կրոնավոր», մկկիթ « մահմեդականների աղոթատեղի», թուդայ « մահմեդականների աղոթք» և այլն:

Նամագ « մահմեդականների աղոթք» բառը հանդես է գալիս միայն նամագ անել « աղոթել», « դանդաղել» հարադրության մեջ, որն ավելի շատ բարբառային բնույթ ունի:

Բովանդակային կողմով սրանց մեջ առանձնակի է մաճրասայ « քրիստոնյաների վարդապետ» բառը:

Աշխարհաբարյան բառախմբի միավորները հայերենին են անցել ոուսերենի միջնորդավորումով, ինչպես նաև թուրքերենից և պարսկերենից: Այսպես՝ ջիհադ և դազապաթ « պատերազմ հանուն հավատի», « սրբապան պատերազմ», մեշիդ « մկկիթ», շարիաթ « մահմեդական իրավունք»: Սրանք հիմնականում հասկանալի են հայերեն խոսող հանրությանը, որոշակիորեն յուրացվել են մեր լեզվի կողմից, սակայն հասարակական պահանջումների բացակայությունից ելնելով՝ մնացել են մեկուսի: Այդ հարցում, անշուշտ, վճռական դեր են խաղացել արտալեզվական գործոնները:

Բուդդայականությանը և այլ կրոնների առնչվող բառակազմութեան մեկուսի բառերը հատկանշվում են նախ գործածության խիստ

սահմանափակվածությամբ (հանդիպում են հիմնականում գիտական և տեղեկատու գրականության մեջ), բառիմաստների անհասկանալիությամբ, հնչյունական անսովոր կառուցվածքով և, կարելի է ասել, սպգային-կրոնական բնույթի օտարաբանություններ են: Օրինակ՝ ճիճայա «փրկության նեղ ուղի», մահայա «փրկության լայն ուղի», սանգիս «կրոնական համայնք», պաշտամունքային կառույցների անվանումներ՝ ստուպա, պագոդա, դագոդա<sup>10</sup>: Այդպես էլ՝ հինդուիզմի կրոնական քառերից՝ սանսարի «հոգու վերամարմնավորում», կարմա «հատուցում, փոխհատուցում» և այլն:

Այս բառախմբի մեջ է մտնում նաև *ճիրվանա* (սանսկրիտից) «հոգու բարձրագույն երանության վիճակ» բառը, որ հայերեն գեղարվեստական խոսքում գործածվում է ոչ կրոնական բովանդակությամբ:

Հայերենի բառակազմորեն «ամուլ» կրոնական բառերի քննությունն ավարտենք մեկուսացած մնալու ընթացքին նպաստող գործոնների մատնանշումով.

ա) լեզվական նշանի անպուզորդելիությունը համանման այլ միավորների հետ.

բ) բառի արտաքին-հնչյունական անհարապատությունը հայերենին.

գ) գործածման ոլորտի սահմանափակությունը.

դ) գործածման խիստ ցածր հաճախականությունը.

ե) իմաստային չպատճառաբանվածությունը կամ ստուգաբանական անհասկանալիությունը.

յ) հայերեն համարժեք (հոմանիշ) բառի առկայությունը.

է) փոխատու լեզվում փոխառությունների ոչ բառային բնույթը՝ կապակցություն, նախադասություն.

ը) գործածման տարածքային սահմանափակությունը.

թ) բառիմաստից բխող անբաղադրելիությունը.

ժ) գործածման ժամանակային սահմանափակությունը.

ժա) արտայեզվական հանգամանքներից՝ բառակերտման հասարակական պահանջմունքի բացակայությունը.

ժբ) հոգեբանական պնդակները:

<sup>10</sup> Հայկական սովետական հանրագիտարան, հ. 2, Երևան, 1976, էջ 584-585: